

14425

Բ.Ս. ՏՈՒՐԳԵՆԵՎ

ՄՈՒՄՈՒ



891.71
S-90

891.71

S-99

Ի. Ս. ՏՈՒԳԵՆԵՎ


17 9 NOV 2010

Մ Ո Ւ Մ Ո Ւ

Թարգմ. Հ. ԲՈՂԳՍԵՅԱՆԻ



STOS VOM 8 71



1.

Մոսկվայի հեռավոր փողոցներից մեկում, սպիտակ սյուճե-
րով զարդարված, անտրեսուրով* և ծոված պատշգամբով գորշա-
գույն մի տան մեջ ժամանակով մի ազնվական տիկին եր ապ-
րում, վորը բազմաթիվ հողագուրկ սպասավորներով և սպասու-
հիներով եր շրպատված: Այրի յեր նա:

Նրա բոլոր սպասավորներից ամենաաչքի ընկնողը գնա-
պան Գերասիմն եր, վորը մի հսկա կազմված ունեւր. նա մո-
րեծնունդ խուլ եր: Տիրուհին նրան վերցրել եր գյուղից: Այս-
տեղ նա ապրում եր գյուղական մի փոքրիկ խրճիթում, յեղ-
բայրներից բաժան, թերես ամենաբարեխիղճ հարկատու գյու-
ղացին եր համարվում: Լինելով մի անորինակ ուժի տեր մարդ,
նա չորս հողու աշխատանք եր կատարում—նրա ձեռքում աշ-
խատանքը լավ եր առաջ գնում: Մարդու հրճվանքն եր գալիս,
յերբ տեսնում եր, թե ինչպես նա կամ իր հսկայական ձեռնե-
րով արորի վրա ընկած, ասես մենակ, առանց իր հալից ըն-
կած բեղարած ձիուն, ձեղքում-պատռում եր հողի պինդ կուրծ-
քը, կամ յերբ հնձիորերին այնպիսի ուժգնությամբ եր շարժում
գերանդին, վոր կեչու մատղաշ անտառն կարելի յեր արմատ-
ներով գետին տապալել, և կամ յերբ իր յերեք արշինանոց



59220-66

Ответствен ный редактор Г. А. ПОТЕНЦ Технический редактор О. ТЕР-ДАВЫДОВ

Издание 418|3996—X. Объем 2 печ. лист. Сдано в производство 9|VIII 1934 г. Подписано в печать 7|IX 1934 г. Стагформат Б5-148x210. Уполкрайлит Б 6266. Зак. № 4109 Тираж 2200
Тип. им. «Стачки 1902 г.» АЧКПО Ростов н-Дону

* Անտրեսուրը — շատ բարձր սենյակները առաստաղով յերկու հարկերի յեն բա-
ժնվում, վորոնցից ներսինը կոչվում ե անտրեսուր:

Թմբիչով արագ առանց հոգնելու կալ եր անում ու նրա թե-
վերի պիբկ մկանները լծակի նման վեր ու վար եյին անում:
Բայց ահա Գերասիմին Մոսկվա բերին, նրան կոշիկներ գը-
նեցին, ամառվա կաֆտան կարեցին, ձմեռվա համար ել վոշ-
խարի մորթուց մուշտակ: Նրա ձեռքը սովին ցախավելն ու թին
և դռնապան նշանակեցին:

Սկզբում բոլորովին նրա սրտովը չէր այս նոր նիստուկացը:
Մանուկ հասակից նա սովոր եր դաշտային աշխատանքներին,
գյուղական կենցաղին: Գյուղական ծանր աշխատանքից հետո
Գերասիմի համար խաղալիքի նման բան եր նրա այս նոր
պաշտոնը: Կես ժամ չանցած՝ նա ամեն աշխատանք վերջաց-
նում եր ու նորից կամ բակի մեջտեղում կանգնած բերանը
բաց նայում եր անցողաբաձ անողներին, կարծես ուզում եր նը-
րանցից իմանալ իր հանելուկային կացության բացատրությունը,
կամ հանկարծակի քաշվում եր մի անկյուն և՛ ցախավելն ու
թին մի կողմ շարտելով՝ յերեսնիվար փովում գետնին և ժա-
մերով այդպես պառկում եր թակարդն ընկած գաղանի նման:

Բայց մարդ ամեն բանի ընտելանում ե. վերջապես Գերասիմին
եւ ընտելացավ քաղաղային կյանքին: Նա անելիք շատ չունեւ.
Նրա ամբողջ պարտականությունն այն եր, վոր բակը մաքուր
պահի, որը յերկու անգամ տակառով ջուր կրի, խոհանոցի և
տան համար փայտ բերի ու կտրատի, ոտար մարդ ներս չը-
թողնի և գիշերները պահպանությունն անի: Յեւ պետք ե ա-
սել, վոր նա յեռանդով եր կատարում իր պարտականությունը.
Նրա բակում վոշ մի անգամ, տաշեղի և աղբի կտոր չէյիր
գտնի: Յեթե պատահեր, վոր նրան հանձնված ջուր կրող խեղճ
ու կրակ ձին, տակառով միասին, ցեխոտ յեղանակին մի վորնե
տեղ խրվեյին, ուսերովն այնպես կհրեր, վոր վոշ միայն սայլը,
այլ նույնիսկ ձիուն ել տեղահան կաներ: Յերբ նա սկսում եր
փայտ կտրատել, կացինը նրա ձեռքում ապակու նման զնգում
եւ, իսկ փայտի կտորներն ու տաշեղներն այս ու այն կողմ
եյին թռչում: Ինչ վերաբերում ե ոտար մարդկանց, պետք ե
ասել, վոր այն որվանից, յերբ գիշերվա կեսին յերկու գող բը-
նելով՝ նրանց ձակատ-ձակատի խփեց և այն ել այնպես խփեց,
վոր ել հարկավոր չեղավ նրանց վոստիկանության ձեռք հանձ-
նելու, — այդ որվանից հետո ամբողջ թաղում սկսեցին նրան
պատիվ տալ ու հարգել: Անցորդները, վորոնք իհարկե գողեր
չեյին, այլ պարզապես անծանոթ մարդիկ, նույնիսկ որը ցերե-

կով հենց վոր տեսնում եյին ահեղ դռնապանին, հեռու եյին
փախչում նրանից և գորգուում եյին վրան, կարծես թե նա
կարող եր լսել նրանց գոռոցը: Գերասիմի հարաբերությունը
տան մյուս ծառաների հետ այնքան ել մտերմական չէր, նրանք
վախենում եյին նրանից, բայց և այնպես հետները լավ եր,
իրենից ոտար չէր համարում նրանց: Գերասիմի հետ նրանք
նշաններով եյին բացատրվում, նա նրանց հասկանում եր և
կատարում բոլոր հրամանները. բայց ճանաչում եր նաև իր
իրավունքներն, այնպես վոր վոշվոք չէր համարձակվում բռնել
նրա տեղը ընդհանուր սեղանի շուրջը: Գերասիմին ընդհանրա-
պես խիստ և լուրջ բնավորության տեր մարդ եր և սիրում եր,
վոր ամեն բան կարգով ու կանոնով լինի: Նրա ներկայությամբ
նույնիսկ քաղաղները չեյին համարձակվում կովելու, թե չե
վայր յեկել եր նրանց տարել. հենց վոր նրանց կովվր տեսներ,
վոտքերից կբռներ, անվի նման մի տասն անգամ կպտտեցներ
ողի մեջ ու զատ-զատ մի կողմ կշարտեր նրանց: Տիրուհին
բակում սագեր ել պահում եր. բայց, ինչպես հայտնի յե,
սագը մի պատկառելի և խելոք թռչուն ե: Գերասիմը հարգանք
եր տածում դեպի նրանց, խնամում ու կերակրում եր նրանց.
Նա ինքն ել ազնվացեղ, պատկառելի սագի յեր նման:

Նրան խոհանոցի վերևում մի խուց հատկացրին. նա իր
ձեռքով այդ խուցիկն հարմարեցրեց իր ճաշակի համաձայն.
կաղնի տախտակներից իր համար մահճակալ պատրաստեց՝ գե-
րանի հսկայական վոտներով, վորն իսկապես հսկայի վայել
մահճակալ եր. հարյուր փթանոց ծանրություն ել վոր զնեյիր
վրան, ելի չէր ձկվի: Մահճակալի տակ մի մեծ սնդուկ եր
դրված. անկյունում տեղավորված եր նույնպիսի ամրակուռ մի
փոքրիկ սեղան, իսկ սեղանի կողքին — յեռոտանի աթոռը, վորն
այնքան ամուր և ցածրիկ եր շինված, վոր յերբեմն Գերասիմին
ինքը բարձրացնում եր նրան, ապա վայր եր գցում ու ծիծա-
ղում: Իր խցիկը նա կողպում եր մեծ կողպեքով, վոր սև հա-
ցից թխած կալաչի յեր նման: Այդ կողպեքի բանալին Գերա-
սիմը միշտ հետն եր ման ածում՝ գոտիկից կախած: Նա չէր
սիրում, վոր իր խուցը մարդիկ գային:


Այսպես անցավ մեկ տարի, վորից հետո Գերասիմին մի
փոքրիկ փորձանք պատահեց:

Յերեկոյան դեմ եր: Գերասիմը կամաց-կամաց քայլում էր գետեզրով և ջրին եր նայում: Նա հանկարծ տեսավ, վոր գետի խոկ ափին, տղմի մեջ մի ինչ վոր բան է թպրտում: Նա կռացավ ու տեսավ սպիտակաբուրդ, սև բծերով մի փոքրիկ շնիկ, վորը՝ չնայած իր բոլոր ջանքերին՝ փոչ մի կերպ չեր կարողանում ջրից դուրս պրծնել, թպրտում էր, սահում էր և իր իաց ու լորճուկ մարմնով ամպողջապես դողում էր: Գերասիմը նայեց վողորմելի շնիկին, մեկ ձեռքով բռնեց նրան, դրեց ծոցը և խոշոր քայլերով տուն շտապեց: Նա մտավ իր խուցը, փրկած շնիկին պառկեցրեց մահճակալի վրա, ծածկեց նրան իր ծանր արմյակով*, ապա նախ վազեց գոմը հարդ վերցնելու, հետո յեւ գնաց խոհանոց մի թաս կաթ բերելու: Զգուշությամբ հետ ձգելով արմյակը և հարդը տակը փռելով, կաթը դրեց մահճակալի վրա: Վողորմելի շնիկը դեռ ևս յերեք շաբաթական էր. նրա աչքերը դեռ նոր էյին բացվել. մեկ աչքը մյուսից նսւյնիսկ միջիչ մեծ էր թվում. նա դեռ չեր կարողանում թասից խմել և՛ աչքերը բաց ու խուփ անելով՝ անդադար դողում էր: Գերասիմն զգուշաբար բռնեց նրա գլխից իր յերկու մատներով և դնչիկը կաթին մոտեցրեց: Շնիկը հանկարծ փնչալով, դողալով և խեղդվելու ազահությամբ սկսեց լալել կաթը: Գերասիմը նայեց, նայեց ու հանկարծ սկսեց ծիծաղել....:

Ամբողջ գիշերը շնիկով եր զբաղված նա, պառկեցնում էր, սրբում էր նրան ու վերջապես ինքն ել պառկեց կողքին և ուրախ, խաղաղ քուն մտավ:

Վոչ մի մայր այնպես չի խնամում իր մանկիկին, ինչպես Գերասիմն եր խնամում իր սանուհուն (շնիկն եգ էր): Առաջին որերը նա շատ թույլ էր, նիհար ու տգեղ, բայց կամաց-կամաց կարգի ընկավ, կլորացավ և մի ութ ամսից հետո, իր փրկողի անխոնջ հոգատարության շնորհիվ, դարձավ իսպանական ցեղի մի շատ սիրուն շնիկ՝ յերկայն ականջներով, խողովակաձև թավամազ պոչով և խոշոր արտահայտիչ աչքերով: Նա սաստիկ ընտելացավ Գերասիմին, և նրանից վոչ մի քայլ չեր հեռանում, անբաժան ման էր գալիս նրա հետևից՝ պոչը խաղացնելով: Նա իր շնիկի անունը դրեց Մուսու. — համբերը գի-

* Արմյակ — ուս գլուղացու վերնագգեսա:



տեն, վոր իրենց բառաչով նրանք ուրիշների ուշադրութիւնն են գրավում իրենց վրա: Տանը բոլոր անգամները նրան սիրեցին և նույնպէս Մումունիկ էյին կանչում: Նա շատ խելոք շնիկ էր, ամենքի առաջ քծնվում էր, բայց սիրում էր միայն Գերասիմին: Գերասիմն ինքն ել չափազանց սիրում էր նրան և նա տհաճութիւն էր զգում, յերբ ուրիշները նրան փաղաքշում էյին: Մումուն էր, վոր առավոտները զարթեցնում էր նրան՝ փեշից քաշելով. նա յեր, վոր սանձի փոկը քարշ տալով նրա մոտ էր բերում շուր կրօղ պառավ ձիուն, վորի հետ շատ մտերիմ էր ապրում: Գերասիմի հետ միասին նա լըջադեմ կերպարանքով գետն էր գնում, պահպանում էր ավելներն ու թիերը, վնչ մեկին չէր թողնում մոտենալու նրա խցիկին: Գերասիմը Մումունի համար իր դռան վրա մի անցք բացեց: Յեվ Մումուն կարծես զգում էր, վոր միայն Գերասիմի խցիկումն էր նա լիակատար տանաիրուհի, և դրա համար ել ներս մտնելիս, գոհ դեմքով իսկույն մահճակալի վրա յեր ցատկում: Գիշերները նա բոլորովին չէր քնում, բայց անտեղի յեւ չէր հաջում, ինչպէս բակի հիմար շունը, վորը յետևի թաթերի վրա նստած, դունչը բարձրացրած ու աչքերը խուփ, անտեղի կերպով հաջում էր հենց այնպէս՝ ձանձրութից՝ աստղերի վրա և, ըստ սովորութեան, յերեք անգամ իրար հետևից, — վնչ, Մումունի բարակ ձայնը յերբեք զուր տեղը չէր հնչի. նա հաջում էր այն ժամանակ, յերբ ոտար մարդիկ մոտենում էյին պարսպին, կամ յերբ մի վորևէ տեղ կասկածելի աղմուկ ու խշշոց էր լսվում... Մեկ խոսքով, նա շատ լավ պահպանութիւն էր անում: Ճիշտ է, բակում, բացի նրանից, մութ պիսակավոր, դեղնագույն մորթով մի ուրիշ շուն ել կար, Վոլչոկ անունով, բայց նրան յերբեք, նույնիսկ գիշերները, շղթայեց բաց չէյին թողնում. ասենք նա ինքն ել ծերութեան պատճառով բոլորովին ազատութիւն չէր պահանջում, այլ բնում կուշ յեկած յերբեմն միայն հաջում էր խզված, համարյա անլսելի ձայնով, և իսկույն ել դադարում էր, ասես թե ինքն ել զգալով իր հաջոցի ապարդյուն լինելը: Մումուն տիրուհու տունը չէր գնում, և, յերբ Գերասիմը ցախ էր տանում սենյակները՝ միշտ հետ էր մնում և անհամբերութեամբ սպասում էր նրան պատշգամբի մոտ, ականջները սրելով ու գլուխը մեկ դեպի աջ, մեկ ել հանկարծ վեպի ձախ ծռելով, յերբ դռների հետևից մի աննշան թրխկոց էր լսվում:

Այսպես մի տարի յել անցա՛վ: Գերասիմը շարունակում էր դռնապանութիւնը և շատ գոհ էր իր վիճակից, յերբ հանկարծ մի անակնկալ դեպք պատահեց...: Այսինքն՝ ամառային մի գեղեցիկ օր, տիրուհին իր կենակցող կանանց հետ ման էր գալիս հյուրասենյակում: Նրա տրամադրութիւնը տեղն էր, ծիծաղում և կատակներ էր անում:

Կենակցող կանայք նույնպես ծիծաղում ու կատակներ էլին անում. բայց շատ էլ ուրախ չէին. անեցիք չէին սիրում, յերբ տիրուհին ուրախ տրամադրութիւն էր ունենում, վորովհետև նախ՝ պահանջում էր, վոր ամենքն էլ այդ բոլորին անհապաղ ուրախ տրամադրված լինեն, ու բարկանում էր, յեթե վորևէ մեկի դեմքը գոնությամբ չէր փայլում և յերկրորդ՝ նրա այդ հանկարծակի բռնկումները յերկար չէին տևում և սովորաբար մռայլ և թթված տրամադրության էլին փոխվում: Այդ օրը ինչ-վոր բարեհաջող օր էր նրա համար. խաղաթղթով ֆալ բացելիս, նրան չորս զինվոր վիճակվեց, վոր նշանակում էր ցանկութիւնների կատարում. նա միշտ առավոտներն էր ֆալ բաց անում. այդ օրվա թէյն էլ առանձնապես համեղ թվաց նրան, վորի համար սպասուհին ստացա՛վ՝ խոսքերով գովասանութիւն և փողով էլ տասը կոպեկ: Քաղցր ժպիտը խորշումած շրթունքներին՝ տիրուհին զբոսնում էր հյուրասենյակում. նա մտտեցա՛վ լուսամուտին, վորի առջև գտնվում էր մի փոքրիկ ճաղապատ ծաղկոց:

Ծածկոցի ուղիղ կենտրոնի ծաղկաթմբում, վարդի թփիկի տակ պառկել էր Մուժուն և խնամքով մի վոսկոր էր կրծում: Տիրուհին տեսա՛վ նրան:

— Աստված իմ, — գոչեց նա հանկարծ, — սա ի՞նչ շուն է: Կենակցողներից մեկը, վորին դիմեց տիրուհին, շփվեց. խեղճ կինը համակվեց մի վշտագին անհանգստությամբ, վորպիսին հատուկ է այն ստորադրյալին, վորը դեռ լավ չգիտե, թե ինչպես պետք է հասկանա իր իշխանավորի բացականչութիւնը:

— Չ...չ...չգիտեմ, — մըթմըթաց նա, — կարծեմ՝ համբիսն է:

— Աստված իմ, — ընդհատեց նրան տիրուհին: Ա՛խ, այդ ինչ սիրուն շնիկ է: Հրամայեցեք նրան ներս բերել: Վաղուց է այդ շնիկը նրա մոտ է: Ի՞նչպես է պատահել, վոր մինչև օրս յես նրան չեմ տեսել...: Դե, կարգադրեցեք, վոր ներս բերեն:



Կենակցող կիսն անմիջապես վազեց նախասենյակը:
— Մորդ, մորդ, — գոռաց նա, — շուտ գնացեք, Մումու-
լին այստեք բերեք: Նա ծաղկոցումն է:

— Ուրեմն անունը Մումուլ յե, — ասաց տիրուհին. — շատ սիրուն անուն է:

— Այո, շատ սիրուն, — վրա բերեց կենակցող կիսը: — Ի՛նչ շուտ, Ստեփան, շուտ:

Լակեյի պաշտոն կատարող Ստեփանը, վոր մի պնդակազմ տղա յեր, գլուխը կորցրած շտապելով վազեց ծաղկոց և հենց վոր ուզեց բռնել Մումուլին, սա վարպետորեն դուրս պրծավ նրա ձեռքից ու պոչը ցցած՝ արագ վազեց Գերասիմի մոտ, վորն այդ միջոցին, խոհանոցի առաջ կանգնած, թափ եր տալիս տակառը, պտտեցնելով ձեռքերում՝ վորպես մանկական մի թմբուկ: Ստեփանը վազեց Մումուլի հետևից և աշխատեց բռնել նրան հենց տիրոջ վտանների մոտ. բայց ճարպիկ շնիկը փախչում եր ոտար ձեռքերից, ցատկոտում և դես ու դեն եր ընկնում: Գերասիմը քրմ-ծիծաղ տալով դիտում եր այս ծիծաղաշարժ տեսարանը: Վերջապես Ստեփանը դժվարությամբ բարձրացավ տեղից, շտապ-շտապ նշաններով հասկացրեց նրան, թե տիրուհին պահանջում է իր մոտ տանել նրա շնիկին: Գերասիմը միքիչ զարմացավ, բայց և այնպես կանչեց Մումուլին, վերցրեց նրան գետնից ու Ստեփանին հանձնեց: Ստեփանը ներս տարավ նրան հյուրասենյակը և բաց թողեց պարկետի վրա: Տիրուհին սկսեց փաղաքշական ձայնով շնիկին իր մոտ կանչել:

Մումուն, վոր յերբեք իր կյանքում այսպիսի չքեղ սենյակներում չեր յեղել, շատ վախեցավ և ուզում եր դեպի դուռը վազել, սակայն, ծառայելու պատրաստակամ Ստեփանը հետ հրեց շնիկին, վորը և դողդողալով պատին հպվեց:

— Մումուլ, Մումուլ, դե, մոտ յեկ, մոտեցիր տիրուհուդ, — ասում եր տիկինը, — մոտեցիր, անխելք..., մի վախենար:

— Մստեցիր, մոտեցիր տիրուհուն, Մումուլ, — ասում էին կենակցող կանայք, — մոտեցիր...:

Սակայն Մումուն թախծոտ չորս կոմն եր նայում ու տեղից չեր շարժվում:

— Մի բան բերեք ուտելու, ասաց տիրուհին: — Ի՛նչ հիմարն է, տիրուհուն չի մոտենում: Ի՛նչից է վախենում:

— Նա դեռ սովոր չե, — յերկչոտ ու մեղմ ձայնով ասաց կենակցող կանանցից մեկը:

Ստեփանը մի թաս կաթ բերեց, դրեց Մուսուլի առջևը՝ բայց Մուսուլն նույնիսկ հոտ չքաշեց կաթից և՛ ամբողջ մարմնով դողալով, առաջվա պես չորս կողմն եր նայում:

— Ո՛հ, սա ի՞նչ տեսակ շուն ե, — ասաց տիրուհին, մոտ գնաց շնիկին, կռացավ և ուզեց նրան շոյել, բայց Մուսուլն ջղաձգաբար գլուխը հետ քաշեց և դնջրտալով ատամները մերկացրեց: Տիրուհին արագութեամբ հետ քաշեց ձեռները:

Տիրեց բոպեյական լուսթյուն: Մուսուլն թույլ ձայնով կաղկանձեց, ասես գանգատ եր անում ու ներողութիւն խնդրում: Տիրուհին հեռացավ, հոնքերը կիտեց: Շան այս հանկարծակի շարժումը վախեցրեց նրան:

— Վայ, կանչեցին մեկ բերան բոլոր կենակցող տիկիները. արդոք նա ձեզ չկծեց (Մուսուլն իր կյանքում վոչ մեկի չեր կծել): Ա՛խ, ա՛խ:

— Հեռացրեք նրան այստեղից, — փոխված ձայնով հրամայեց պառավ տիրուհին: — Անտանելի շնիկ: Ի՞նչ չարն ե նա:

Ու զանգաղորեն հետ դառնալով ուղվեց նա գետի իր առանձնասենյակը: Կենակցող կանայք յերկչոտ իրար յերեսին նայեցին և ուզում էին հետևել նրան, բայց նա կանգ առավ, սառնութեամբ նայեց նրանց և ասաց. «Ի՞նչի համար: Ձե՛ վոր յես ձեզ չեմ կանչում», — և գնաց:

Կենակցող կանայք հուսահատաբար ձեռքի շարժումով նրշան տվին Ստեփանին: Սա յեւ շտապ վերցրեց Մուսուլին և արագութեամբ դուրս շարտեց սենյակից Գերասիմի ուղղակի վտանների մոտ. իսկ կես ժամ հետո, տան մեջ տիրում եր խորը լուսթյուն, և պառավ տիրուհին նստել եր իր բազմոցի վրա՝ մրրկաբեր ամպերից ել ավելի մուայլ: Ինչպիսի՛ աննշան բաներ կարող են յերբեմն մարդու վիշտ պատճառել:

Մինչև յերեկո տիրուհին արամադրութիւն չուներ. վոչ վորի հետ չեր խոսում թուղթ չեր խաղում և գիշերն ել վատ անցկացրեց: Հանկարծ նրան թվաց, վոր իբր այն ողբերգունը չեն տվել, վորը սովորաբար տալիս էին, վոր իբր նրա բարձից ոճառի հոտ ե գալիս, ու նա հարկադրեց իր հանդերձապահուհուն բոլոր ձեմակեղենը հոտոտել, — մեկ խոսքով՝ հուզվում և շատ եր «տաքանում»: Մյուս առավոտ նա սովորականից մի ժամ առաջ հրամայեց կանչել Գավրիլին:

— Ասա, խնդրեմ, — սկսեց նա, հենց վոր Գավրիլը, ներքին վորոչ անհանգստութեամբ, կաբինետի շեմքից ներս մը-

տավ, — դա ի՞նչ շուն եր, վոր ամբողջ գիշերը հաջում եր մեր բակում, և ինձ քնել չտվեց:

— Շուն... Ի՞նչ շուն... Գուցե համրի շունը լինի, — պատասխանեց նա վոչ հաստատուն ձայնով:

— Չգիտեմ, համրինն ե, թե՛ ուրիշինը. միայն գիտեմ, վոր չլթողեց քնեմ: Յե՛վ յես զարմանում եմ, վոր այնքան շատ շուն են պահում այստեղ: Ձե՛ վոր մենք բակի շուն ունենք:

— Ինչպե՛ս չե, — ունենք: Վոլչովն ե:

— Իե ել ինչներքն ե պետք մեկ ուրիշ շուն: Միայն անկարգութիւն առաջացնելու համար ե, ուրիշ վոչինչ: Մե՛ծ չկա տան մեջ, անա թե ինչ: Համրին ինչի՞ն ե պետք շունը: Ո՞վ ե նրան իրավունք տվել իմ բակում շուն պահել: Յերեկ յես մոտեցա լուսամուտին, տեսնեմ՝ այդ շունը պառկած ե ծաղկոցում. բերել ե մի ինչ-վոր զզվելի բան ու կրծոտում ե. չե՛ վոր յես այնտեղ վարդեր եմ տնկել տվել...:

Տիրուհին մի փոքր լուեց:

— Հենց այսօր ել այդ շունն այստեղից պետք ե հեռացվի...: Հասկացար:

— Կտում եմ:

— Հենց, այսօր, հասկացար: Իսկ այժմ գնա: Ձեկուցման համար յես քեզ հետո կկանչեմ:

Գավրիլը դուրս գնաց:

Ծառայապետը, հյուրասենյակից անցնելիս, սենյակի սարքը պահպանած լինելու համար, զանգակը մի սեղանից վերցրեց մյուսի վրա դրեց, սուս-փուս խնչեց ու սրբեց բաղակաուց քիթը և դուրս յեկավ նախասենյակը: Նախասենյակում յերկար նստարանի վրա քնած եր Ստեփանը, վոր նկարում սպանված զինվորի յեր նման, ջղաձգաբար բորիկ վոտները դուրս հանելով սյուրտուկի տակից, վորը նրան վերմակի տեղ եր ծառայում: Ծառայապետը բոթեց նրան, հաղորդեց մի ինչ վոր կարգադրութիւն, վորին Ստեփանը պատասխանեց կիսահորանջելով, կիսածիծաղելով: Ծառայապետը հեռացավ, իսկ Ստեփանը տեղից վեր թռավ, բաձկոնը և կոշիկները հագավ, դուրս յեկավ կանգնեց սանդուխքի վրա: Հինգ բոպե չանցած, մի մեծ շտրակ փայտ մեջքին, յերեաց Գերասիմի իր անբաժան Մուսուլի ուղեկցութեամբ (տիրուհին նույնիսկ ամառը հրամայում եր վառել իր ննջարանն ու առանձնասենյակը): Գերասիմը զրուան առաջ կողքի դառնալով, ուսով հրեց դուռն ու իր բեռան

հետ ներս մտավ: Մուժուն, ըստ սովորութեան, մնաց դուրսը նրան սպասելու:

Այդ միջոցին, պատեհ ըրպեյից ոգտվելով, Ստեփանը հանկարծ վրա ընկավ և, ինչպես ուրուրը ճտի վրա, շան կուրծքը գետնին սեղմելով, խտտեց նրան ու նույնիսկ գլխարկը չհագած, դուրս վազեց բակից, նստավ առաջին պատահած կառքը և շտապ ուղեվորվեց Ոստանիչի բյադկոչվող փողոցը: Այնտեղ նա շուտով գնորդ գտավ, ծախեց հիսուն կոպեկով, բայց այն պայմանով միայն, վոր գնորդը գոնե մի շաբաթ նրան կապած պահի, և իսկույն տուն դարձավ: Բայց դեռ տուն չհասած, կառքից ցած իջավ ու մի շրջան անելով, տան հետևի կողմի նրբափողոցն անցավ և ցանկապատի վրայով բակը թռավ: Ղոնակից չուզեց ներս մտնել, վոր չլինի թե Գերասիմին հանդիպի:

Սակայն նա գուր եր անհանգստանում. Գերասիմն արդեն բակում չեր: Տնից դուրս գալով, նա իսկույն նկատեց, վոր Մուժուն չկա. դեռ յերբեք չեր պատահել, վոր շնիկն իր վերադառնալուն չսպասեր. նա պատեպատ ընկավ, վազեց ամեն կողմ, սկսեց փնտռել ու իր ձեռով կանչել նրան... Շտապեց իր խուցը, խոտնոցը, վազեց դուրս՝ փողոցը — ման յեկավ այս կողմ, այն կողմ... Շնիկը կորել եր: Նա զիմեց իր ծառայակիցներին՝ ամենահուսահատական նշաններ անելով: Հարցնում եր նրա մասին՝ նշանացի ցույց տալով գետնից կես արշին բարձր, ձեռքերով նկարում եր նրան... Վոմանք, ճիշտ վոր չգիտեյին ուր ե կորել Մուժուն և միայն գլխով եյին անում. մյուսները գիտեյին և ծաղրում եյին նրան, իսկ ծառայապետը շատ լուրջ կերպարանք ընդունեց ու սկսեց կառապանների վրա գոռալ: Իրանից հետո Գերասիմը դուրս վազեց փողոց:

Արդեն մութն ընկել եր, յերբ նա տուն վերադարձավ: Նրա հոգնած ղեմքից, յերբրուն քայլվածքից, փոշոտ գգեստից կարելի յեր յենթադրել, վոր նա կես-Մոսկվան վազ ե տվել դես ու դեն: Նա կանգ առավ տիրուհու տան պատուհանների առջև, աչք ածեց պատշգամբին, վորտեղ հավաքված եյին յոթը սպասավորներ, շուռ յեկավ, մի անգամ ել մումոաց «Մումու»: Մումուն չեր արձագանքում: Նա հեռացավ այդտեղից: Բոլորը հետևից նայեցին, բայց վոչ վոր չծիծաղեց, վոչ վոր վոչ մի խոսք չարտասանեց, իսկ հետաքրքրվող ֆորեյտոր* Անտիպկան մյուս

* Միմյանց հետևից լծված ձիերի առաջին զույգը քոչը:

առավոտը խոհանոցում պատմում եր, վոր իբր թե համրն ամբողջ գիշերը տնքում հառաչում եր:

Հետևյալ ամբողջ որը Գերասիմը չեր յերևում, այնպես վոր նրա փոխարեն ջրի պետք եր գնար կառապան Պոտապը, վորն այդ բանից շատ դժգոհ մնաց: Առավոտյան տիրուհին Գավրիլին հարցրեց՝ հրամանը կատարված ե թե վոչ: Գավրիլը պատասխանեց, թե կատարված ե:

Հետևյալ առավոտը Գերասիմը դուրս յեկավ իր խցից ու աշխատելու գնաց: Ճաշի ժամանակ յեկավ, կերավ ու նորից գնաց, առանց մեկին բարևելու: Նրա ղեմքը, վոր առանց այդ ել անկենդան եր, ինչպես բոլոր խուլհամրերինը, այժմ կարծես քարացած լիներ: Ճաշից հետո նա դարձյալ բակից դուրս գնաց, բայց կարճ ժամանակով, սպա վերադարձավ և իսկույն խոտնոց գնաց:

4.

Լուսնկա և պարզ գիշեր եր: Ծանր շունչ քաշելով և անդադար մեկ կողմից մյուսը դառնալով, պառկած եր Գերասիմը. հանկարծ նա գգաց, թե կարծես նրա փեշից քաշում են. նա բոլոր մարմնով սկսեց դողալ, սակայն գուլխը չբարձրացրեց, նույնիսկ աչքերն սկսեց կկոցել. բայց ահա նորից քաշեցին փեշից ու այս անգամ առաջինից ավելի ուժգին կերպով: Նա վեր թռավ տեղից...: Նրա առջև, պարանի կտորը վզից կախ, պտտվում եր Մումուն: Ուրախութեան մի յերկար ճիչ արձակեց Գերասիմն իր անխոս հոգու խորքից: Նա գրկեց Մումունին, սեղմեց կրծքին. Մումուն մի ակնթարթում լիզեց նրա քիթն, աչքերը, բեխերն ու մորուքը...: Գերասիմը մի քիչ կանգնեց, միտք արավ, գգուշաբար վայր իջավ խոտնոցից, նայեց չորս կողմ և, հավաստիանալով, վոր իրեն տեսնող չի լինի, բարեհաջող կերպով իր խուցն անցավ: Գերասիմն արդեն առաջ հասկացել եր, վոր շունն ինքն իրեն չեր կարող կորչել, վոր նրան, յերևի, տիրուհու հրամանով տարել, անհայտացրել են. մարդիկ հո նշաններով հասկացրել ելին նրան, թե ինչպես Մումուն չարացել եր տիրուհու վրա, — ու նա վորոշեց ձեռք առնել բոլոր միջոցները: Նախ և առաջ Մումունին հաց տվեց ուտելու, սկսեց գգվել նրան, պառկեցրեց, հետո սկսեց մտածել, անվերջ մտածել, թե ինչ անի, վոր իր շնիկին լավ

59220.66



պահպանի: Վերջապես նա վորոշեց ցերեկները նրան խցում պահել և յերբեմնակի միայն գալ նրան տեսնելու համար, իսկ գիշերները դուրս բերել նրան: Դռան մեջ բաց արած անցքը նա փակեց իր հին արմյակով, ու՛ լույսը բացված-չբացված՝ արդեն բախումն էր, իբր թե վոչինչ չէր պատահել, իր դեմքին պահելով նույնիսկ նախկին տիրությունը (անմեղ խորամանկություն):

Խեղճ համրի մաքուր անգամ չէր կարող անցնել, վոր Մուսուսուն իր փոռնոցով կմատնի իրեն: Յե՛վ իրոք, շուտով բոլոր տնեցիք իմացան, վոր համրի շունը վերադարձել է ու խցում փակված է, բայց խղճալով և՛ նրան և՛ Մուսուսին, թերևս մասամբ էլ նրանից յերկյուղ կրելով, այնպես էյին ձևանում, վոր իբր վոչինչ չգիտեն: Մենակ ծառայապետն էր, վոր սիրտ անելով ծոծրակը քորեց ու ձեռքը թափահարելով ասաց. «Դեհ, ինչ արած, աստված իր հետ, թերևս տիրուհին չիմանա»: Դրա փոխարեն համրն այնպիսի յեռանդով էր աշխատում այդ որր, ինչպես յերբեք. նա հավաքեց, մաքրեց ամբողջ բակը, մի ծիլ խոտ չթողեց. ծաղկոցի ճաղապատի ցցերն իր սեփական ձեռքերով դուրս քաշեց, վոր հաստատ իմանա՝ պինդ են նրանք արդյոք, թե վոչ, ու ինքն էլ հետո նորից մեխեց իրենց տեղը, — մեկ խոտքով այնպիսի լարվածությամբ էր աշխատում, վոր նույնիսկ տիրուհին էլ ուշադրություն դարձրեց նրա փութաջանության վրա:

Որվա ընթացքում Գերասիմը յերկու անգամ գաղտնի կերպով տեսության գնաց իր բանտարկյալին. իսկ յերբ վրա հասավ գիշերը, նա պակեց նրա հետ խցում և վոչ թե խոտնոցում, և միայն ժամը մեկից անց շան հետ դուրս յեկավ բակ մաքուր ոգում զբոսնելու համար: Բակում բավական յերկար ման գալուց հետո, նա արդեն տուն դառնալու վրա յեր, յերբ հանկարծ ցանկապատի հետևից, նրբափողոցի կողմից, ինչ-վոր խշտոց լսվեց: Մուսուսն ահանջները սրեց, մոնչաց, մոտեցավ ցանկապատին, հոտոտեց ու սկսեց բարձր ու զիլ ձայնով հաջել: Մի ինչ-վոր հարբած մարդ վորոշել էր գիշերն այստեղ, այս պատի տակ լուսացնել:


Հենց այդ միջոցին էր, վոր տիրուհին, յերկարատև «ներվային հուզմունքից» հետո, դեռ նոր քուն էր մտել: Այսպիսի հուզմունքները միշտ հաջորդում էին չափազանց կուշտ ընթրիքներին: Հանկարծակի հաջոցը նրան գարթեցրեց. «աղջիկներ,

աղջիկներ, — հառաջեց նա. — աղջիկներ, հասեք»: Մարսափած սպասուհիները վազեցին յեկան նրա ննջարանը: «Ո՛հ, ո՛հ, մեռնում եմ, — ասաց նա, վշտահար կերպով ձեռքերը պարզելով: — Դարձյա՛լ, դարձյա՛լ այս շունը... Ո՛հ, մարդ ուղարկեք բժշկի հետևից: Նրանք ինձ սպանել են ուզում: Շո՛ւնը, ելի՛ շո՛ւնը, ո՛հխ: — Յե՛վ նա գլուխը հետ շարտեց, վոր ուշաթափվելու նշան էր համարվում:

Վազեցին բժշկին կանչելու, այսինքն տնային բժիշկ Խարիտոնին: Այս բժիշկը, վորի ամբողջ շնորհքն այն էր, վոր հագնում էր փափուկ ներբաններով կոշիկներ, գիտեր նրբավարի կերպով զարկերակը դիտել, ընում էր որվա տասնչորս ժամը, իսկ մրնացած ժամանակը հառաչում էր և ծվաղենու կաթիլներ էր հրամեցնում տիրուհուն, — այս բժիշկը հենց նույն ժամին յեկավ ծխեցրեց սագի փետուր ու յերբ տիրուհին բաց արավ աչքերը, իսկույն մատուցեց նրան արծաթե փոքրիկ մատուցարանի վրա նվիրական դեղակաթիլներով ըմպանակը: Տիրուհին ընդունեց դեղակաթիլները, բայց իսկույն լացակամած ձայնով սկսեց զանգատվել և՛ շան, և՛ Գավրիլի և՛ իր ճակատագրի վրա. զանգատվում էր, վոր նրան՝ խեղճ պառավ տիկնոջ, բոլորն էլ աչքաթող են արել, վոր վոչ վոք նրան չի կարեկցում, վոր ամենքն էլ նրա մահն են ուզում:

Մինչ այդ մինչ այն, վողորմելի Մուսուսն շարունակում էր հաջել, իսկ Գերասիմը դուր ջանք էր թափում նրան ցանկապատից հեռացնելու համար: «Մ՛յ, ա՛յ, ... նորից...», թոթովեց տիրուհին և դարձյալ աչքերը խփեց: Բժիշկը մի բան փափսաց սպասուհու ահանջին. սա իսկույն դուրս թռավ նախասենյակը, զարթեցրեց Ստեփանին. սա յեկ վազեց Գավրիլին զարթեցնելու, Գավրիլն էլ զայրացած՝ ամբողջ տունը վոտքի հանեց:

Գերասիմը յերեսը շուռ տվեց դեպի տունը, սեսավ լուսամուտներում փայլվող ճրագների ստվեքները և նախազգալով, վոր զլխին փորձանք է պայթելու, Մուսուսին գրեց թևի տակը, վազեց իր խուցը ու դուռը փակեց: Մի քանի ըոպեյից հետո հինգ հոգի ներս խուժեցին նրա խուցը, բայց սոգնակի դիմադրմանը հանդիպելով, կանգ առան: Մաստիկ շտապելով յեկավ Գավրիլը, հրամայեց, վոր մինչև առավոտ ամենքն էլ մրնան այստեղ ու պահպանություն անեն. իսկ ինքը վազեց սպասուհիների սենյակը և ավագ կենակցող Լյուբով Լյուբիմովայի միջոցով, վորի հետ միասին գողանում և միաժամանակ թեյի, շաքարի և այլ նպարեղների հաշիվներն էր պահում,



հրամայեց զեկուցել տիրուհուն, վոր տարաբախտաբար շունն անհայտ կերպով նորից յեկել է, բայց վոր վաղն ել նա կենդանի չի մնա, ու թող տիրուհին չբարկանա և հանգիստ լինի:


Տիրուհին, հավանորեն, այդքան շուտ չե՞ր հանգստանա, յեթե բժիշկը՝ շտապելու պատճառով, տամներկու կաթիլի փոխարեն քառասուն կաթիլ դեղ չլցներ. ծվաղենին իհարկե իր ազդեցությունն ունեցավ, — քառորդ ժամ չանցած՝ տիրուհին քնեց խոր և հանգիստ քնով: Իսկ Գերասիմը, բոլորովին սփրթնած, պառկած էր մահճակալի վրա և պինդ սեղմում էր Մուսուլյի յերախը:

Հետևյալ առավոտյան տիրուհին բավական ուշ զարթնեց: Գավրիլն սպասում էր նրա զարթնելուն, վորպեսզի հրաման արձակի վճռական գրոհի յենթարկել Գերասիմի պատսպարանը, իսկ ինքն սպասում էր իր գլխին պայթելու ամպրոպին. սակայն ամպրոպն անցավ: Տիրուհին, անկողնում պառկած, հրամայեց կանչել ավագ կենակցողին:

— Լյուբով Լյուբիմովնա... — սկսեց նա կամաց և թույլ ձայնով. յերբեմն նա սիրում էր ամենքից լքված, անտեր-անտիրական ձևանալ. ասե՛ն ավելորդ է, վոր նման դեպքերում տրեցեցիք շատ անհարմար վիճակի մեջ եյին լինում: — Լյուբով Լյուբիմովնա, դուք տեսնում եք՝ ինչ է իմ դրությունը. գնացե՛ք, հոգի ջան, Գավրիլ Անդրեյեվիչի մոտ և խորհեցե՛ք նրա հետ. միթե՛ ինչ-վոր մի շնիկ ավելի թանգ արժե նրան, քան իր տիրուհու հանգստությունը և նույնիսկ նրա կյանքը: Յես չեյի կամենա այդ բանին հավատալ, — ավելացրեց նա խորապես զգացված արտահայտությամբ: — Գնացե՛ք, հոգիս, բարի յեղեք, գնացե՛ք Գավրիլ Անդրեյեվիչի մոտ:

Լյուբով Լյուբիմովնան գնաց Գավրիլի սենյակը: Ինչի մասին խոսեցին նրանք, վոչ վոք չգիտե. բայց մի փոքր ժամանակից հետո ծառայողների մի ամբողջ խումբ բակի միջով քայլերն ուղղեցին դեպի Գերասիմի խուցը:

Առաջևից գնում էր Գավրիլն ու ձեռքով գլխարկն էր պահպանում, թեև քամի չկար. նրա կողքերից գնում եյին լակեյներն ու խոհարարները. լուսամուտից նայում էր քեռի խրվոստը և կարգադրություններ էր անում, այսինքն՝ ձեռքերն էր պարզում այս ու այն կողմ. ամենքից վերջը թռչկոտելով և ծամաձուլություններ անելով գնում եյին յերեխաները, վորոնց կեռ փողոցից եյին հավաքվել: Նեղ սանդուղքի վրա, վոր դեպի



խցիկն եր տանում, նստած եր պահապաններից մեկը. մյուս
յերկուսը, դազանակները ձեռքերին, կանգնած եյին դռան մոտ:
Սկսեցին սանդուղքով բարձրանալ ու բռնեցին նրան ամբողջ
յերկարութեամբ: Գավրիլը մոտեցավ դռանը, բռունցքով ծեծեց,
գոռաց.

— Բաց արն:

Լավեց մի խուլ հաշոց, բայց պատասխան չկար:

— Քեզ են ասում, բաց արա, — կրկնեց նա:

— Գավրիլ Սնդրեյեփիչ, — նկատեց ներքևից Ստեփանը. —

ախր նա խուլ է, չի լսի:

Բոլորը ծիծաղեցին:

— Բա ինչպես անենք, — առարկեց վերևից Գավրիլովը:

— Այտեղ, դռան վրա, մի անցք կա, — պատասխանեց
Ստեփանը. — անցքից ներս խոթեք գավազանն ու պտտեք:

Գավրիլը կռացավ:

— Նա այդ անցքը ինչ-վոր արմյակով է փակել:

— Ի՞նչ կա վոր. արմյակը անցքից ներս խոթեցեք:

Նորից լավեց խուլ հաշոց:

— Լսում եք, լսում եք, ինքն իրեն մասնեց, — ասողներ
յեղան բազմութեան մեջ ու նորից ծիծաղեցին:

Գավրիլը քորեց ծոծրակը:

— Չե, ախպեր, — շարունակեց նա վերջապես, — թե կու-
զես ինքդ ներս խոթի արմյակը:

— Ինչո՞ւ չե, համեցեք:

Ստեփանը դժվարութեամբ վեր յելավ, վերցրեց գավազանը,
արմյակը ներս խոթեց ու սկսեց անցքի մեջ գավազանը պտտ-
տել, ասելով. «դուրս յեկ, դուրս յեկ»: Նա զեռ շարունակում
էր գավազանը պտտել, յերբ հանկարծ խցի դուռն արագութեամբ
բացվեց, — ու բոլոր ծառաները գլխկոնձի տալով սանդուղքից
վայր գլորվեցին, և ամենից առաջ Գավրիլը: Քեռի Խժոստն իս-
կույն փակեց լուսամուտը:

— Դե՛հ, դե՛հ, — կանչեց Գավրիլը բակից: — Խելքդ գլուխդ
հավաքի, թե չե՛:

Գերասիմն անշարժ կանգնած եր շեմքին: Բազմութեանը
հավաքվել եր սանդուղքի ներքևի ծայրում: Գերասիմը վերևից
նայում եր գերմանական բաձկոն հագած այս մարդուկներին՝
ձեռքը մեջքին դեմ արած: Գյուղացիական կարմիր շապիկը հա-
զին, նա, սրանց համեմատութեամբ, մի հսկայի յեր նման:

Գավրիլը մի քայլ առաջ անցավ.

— Մեր տղան, — ասաց նա, — տես հան, հիմարություններ չանես:

Յե՛վ նա սկսեց նշաններով հասկացնել նրան, թե տիրուհին, իբր, անպատճառ պահանջում է քո շնիկը. շուտ արահատուր, թե չէ վատ կլինի:

Գերասիմը նայեց նրան, մատնացույց արավ շանը, ձեռքով ել նրա վզին իբր թե կապ գցելու նշան արավ ու հարցական աչքով նայեց ծառաների ավագի վրա:

— Այո՛, այո՛, — ասաց սա, գլխով համաձայնության նշան անելով, — այո՛, անպատճառ:

Գերասիմն աչքերը գետնին հռեց. հետո հանկարծ ցնցվեց, նորից մատնացույց արավ Մուսուլին, վորն ամբողջ ժամանակ նրա կողքին կանգնած միամտաբար պոչն եր խաղացնում և հետաքրքրությամբ ականջներն եր դես ու դեն շարժում, — նորից իր վզի վրա խեղդելու նշան արեց և ուժեղ կերպով խփեց կրծքին՝ իբր թե ասելով, վոր իր վրա յե վերցնում Մուսուլին սպանելու պարտականությունը:

— Դե դու կխաբեն, — պատասխանեց նրան Գավրիլը, ձեռքերը թափ տալով:

Գերասիմը նայեց նրան, արհամարհական ձևով ժպտաց, նորից խփեց կրծքին ու դուռը փակեց:

— Մա ի՞նչ է նշանակում, — սկսեց Գավրիլը: — Նա փակվեց:

— Թողե՛ք նրան, Գավրիլ Անդրեյեվիչ, — ասաց Ստեփանը. — յեթե խոստացավ, անպատճառ կկատարի. այդպիսի մարդ է նա: Այդ կողմից նա մեզ նման չի, ուրիշ է: Ինչ վոր ճիշտ է, ճիշտ է: Այո՛:

— Այո՛, — կրկնեցին ամենքը և գլխով արեցին: Այդ այդպես է: Այո՛:

Քեռի Խվոստն ել լուսամուտը բաց արեց և նույնպես ասաց. «Այո՛»:

— Դե ո՞վ է իմանում, կտեսնենք, — վրա բերեց Գավրիլը: — Բայց և այնպես պահապանները թող իրենց սեղերում մնան: Հե՛յ, Յերոշկա, քեզ եմ ասում, — ավելացրեց նա՝ դիմելով գեղին նանկինի արխալուզ հագած մի վողորմելի մարդու, վորը պարտիզպանությունն եր անում:

— Դու հո անելու գործ չունես: Գավազանդ վերցրու և նստիր այստեղ. հենց վոր մի բան պատահի, իսկույն ինձ մոտ վազիր:

Յերոշկան փայտը վերցրեց ու նստեց սանդուղքի վերջին ստտիճանի վրա:

Բազմությունը ցրվեց, բացի մի քանի հետաքրքրվողներից ու յերեխաներից, իսկ Գավրիլովը տուն վերադարձավ և Լյուբով Լյուբիմովնայի միջոցով հրամայեց տիրուհուն գեկուցել, թե ամեն ինչ կատարված է:

Տիրուհին թաշկինակի ծայրը կապ գցեց, վրան ողեկուրն լցրեց, հոտ քաշեց, քունքերը տորեց, թեյ խմեց և, վորովհետև ծվաղենու կաթիլների ազդեցությունը տակավին չեր անցել, նորից քնեց:

Այս ամբողջ ժխորից մի ժամ հետո խցի դուռը բացվեց և յերևաց Գերասիմը՝ տոնական բաճկոնը հագին: Հետևից տանում եր պարանով կապած Մուսուլին: Յերոշկան մի կողմ քաշվեց ու ճանապարհ տվեց նրան: Գերասիմը քայլերն ուղղեց դեպի դարպասը: Բակում գտնված բոլոր յերեխաներն անխոս նայում ելին նրա հետևից: Նա քայլում եր առանց չորս կողմը նայելու: Գլխարկը գխին դրեց միայն փողոցում: Գավրիլովը նույն Յերոշկային ուղարկեց նրա հետևից իբրև հսկող: Յերոշկան հեռվից տեսնելով, վոր Գերասիմը շան հետ միասին պանդուկ մտավ, կանգ առավ և նրա դուռս գալուն սպասեց:

Գերասիմին պանդուկում ճանաչում ելին և հասկանում ելին նրա նշանները: Նա խնդրեց մտով յեփած շի ու նստավ՝ թե վերով սեղանին կրթնած: Մուսուն կանգնած եր նրա աթոռի մոտ ու իր սիրուն աչքերը հռեղ եր տիրոջ: Նրա մազերն ամբողջապես փայլում ելին. յերևում եր, վոր նրան դեռ նոր են սանրել, մաքրել: Գերասիմի ճաշը բերեցին: Նա հաց բրդեց, միսը մանր կոտորեց և ափսեն հատակին դրեց: Մուսուն սկսեց ուտել իր սովորական հնազանդությամբ, դնչիկը հագիվ կպցնելով կերակրին: Գերասիմն անթարթ նրան եր նայում. արտասուճի յերկու խոշոր կաթիլներ հանկարծ գլորվեցին նրա աչքերից. մեկն ընկավ շնիկի փոքրիկ ու դուրս ցցված ձակատին, մյուսն ել ճաշի մեջ: Նա ձեռքով ծածկեց յերեսը: Մուսուն կես ափսեյի չափ կերավ ու դնչիկը լպստելով, հեռացավ: Գերասիմը տեղից յելավ, փողը վճարեց և արագ դուրս գնաց պանդուկից՝ տարակուսանքի մեջ գցելով սպասավորին:

Յերոշկան, Գերասիմին տեսնելուն պես, պահվեց փողոցի անկյունում ու, յերբ Գերասիմն անցավ, նորից շարունակեց նրա հետևից գնալ:

Գերասիմը գնում էր առանց շտապելու և Մուսուլյին կապից չէր արձակում: Յերբ հասավ փողոցի անկյունը, կանգ առավ, կարծես՝ վարանման մեջ լինեք, և հանկարծ, արագ քայլերով դիմեց ուղղակի դեպի Կրիմսկիյ Բրոդը: Ճանապարհին նա մի ինչ-վոր բակ մտավ, ուր տան կողքին մի Ֆլիգել էր շինվում. այնտեղից վերցրեց յերկու հատ աղյուս, դրեց կոնատակը ու դուրս յեկավ: Կրիմսկիյ Բրոդից նա թեքվեց և գետի ափով շարունակեց առաջ գնալ, մինչև հասավ այն տեղը, ուր գտնվում էյին ցցերից կապված յերկու նավակներ՝ իրենց թիերով (սրանք նա արդեն առաջ էր տեսել). նա արագությամբ թռավ նրանցից մեկի վրա Մուսուլյի հետ միասին: Բանջարանոցի կողքին գտնված վրանից դուրս յեկավ մի կաղիկ ձերուկ, և սկսեց բղավել նրա վրա: Բայց Գերասիմը գլխով արեց միայն ու հոսանքին հակառակ սկսեց թիավարել այնպիսի արագությամբ, վոր մի ակնթարթում հարյուր սաժենի չափ տարածություն անցավ: Ծերունին կանգնեց, նախ ձախ, ապա աջ ձեռքով թիկունքը քորեց և կաղալով իր վրանը դարձավ:

Իսկ Գերասիմը թիավարում հա թիավարում էր: Ահա Մուսկովան մնաց հետևում: Գետի յերկու ափերին արդեն ձգվեցին մարգագետինները, բանջարանոցները, արտերը, պուրակները: Յերևացին խրճիթներ. արդեն գյուղը մոտ էր: Նա թիերը բաց թողեց, կուցավ դեպի Մուսուլն, վոր նստած էր նրա առջևը չոր միջատախտակի վրա, — նավակի հատակը ջուր էր լրցվել, — իր հուժկու ձեռքերով խտտեց շնիկին ու անշարժ մնաց, մինչդեռ ալիքները կամաց-կամաց դեպի քաղաք եյին մղում նավակը:

Վերջապես Գերասիմը շտապով վոտքի կանգնեց, մի տեսակ ցավազին դառնությամբ, պարանով կապեց վերցրած աղյուսները, հանգույց կապեց, և անցկացրեց Մուսուլյի վզով, բարձրացրեց նրան գետի վրա, վերջին անգամը նայեց նրան... Մուսուլն միամտաբար և առանց յերկյուղի նայում էր նրան ու թեթև կերպով պոչն էր շարժում: Գերասիմը յերեսը շրջեց, աչքերը խփեց ու ձեռները բաց արեց...: Նա վոչինչ չլսեց — վնչ ընկնող Մուսուլյի արագ վնգվնգոցը, վնչ էլ ջրի ծանր ձգիյունը. նրա համար ամենաաղմկալի օրն անգամ լուռ էր և



անշուկ, ինչպես մեզ համար անշուկ չե նույնիսկ ամենախաղաղ գիշերը, ու յերբ նա նորից բաց արավ աչքերն, ալիքի փոքրիկ կոհակներն առաջվա պես խաղում էին գետի յերեսին, ասես մեկը մյուսին բռնել եր ուզում. առաջվա պես նրանք դարձյալ զարկվում էին նավակի կողերին և միայն հեռվում, ավի մոտ ինչ վոր լայն շրջագծեր էին տարածվում:

Յերոշկան, յերբ Գերասիմը նրա աչքից անհայտացավ, տուն վերադարձավ ու պատմեց տեսածը:

— Դեհ, իհարկե, նկատեց Ստեփանը, — նա կխեղդի շանը: Այդ մասին կարող եք հանգիստ լինել: Յեթե նա խոստացավ...

Ամբողջ որը վոչ վոք Գերասիմին չտեսավ: Նա տանը չճաչեց: Յերեկոյան ամենքն ընթրիքի հավաքվեցին, բացի նրանից:

— Ի՞նչ տարորինակ մարդ է ես մեր Գերասիմը, — ձվձվաց հաստիկ լվացարարուհին. — կարելի՞ յե արդյոք ինչ վոր շան համար եղբան պատեպատ ընկնել, ճիշտ վոր:

— Գերասիմն եստեղ էր, — հանկարծ բացականչեց Ստեփանը, գդալը կաշայի մեջ խոթելով:

— Ի՞նչպես: Յերբ:

— Ա՛յ, մի յերկու ժամ սրանից առաջ: Իհարկե: Մենք իրար հանդիպեցինք դարպասի մոտ. նա դուրս եր գնում բակից: Մեկ ուղեցի հարցնեմ շան մասին, բայց տեսա քեֆը տեղը չի: Նա ինձ մի կողմ հրեց. յերևի կնպես, ուզում եր, վոր իրեն չմոտենամ, հարց ու փորձ չանեմ, — բայց կնպես հասցրեց վզակոթիս, վոր ո՛յ, ո՛յ, ո՛յ, — ու Ստեփանը, ակամա ծիծաղելով, կուչ յեկավ ու ծոծրակը քորեց: — Այո, որհնած ձեռք ունի նա, ասելն ավելորդ է:

Ամենքը ծիծաղեցին Ստեփանի վրա և ընթրիքից հետո ցրվեցին քնելու:

6.

Հենց այդ իսկ ժամանակ, շտապ քայլերով և առանց կանգ առնելու, խճուղիով գնում եր մի հսկա, պարկը շալակին և յերկար գավազանը ձեռքին: Դա Գերասիմն էր: Նա շտապում եր առանց հետ նայելու, շտապում եր տուն, իր գյուղը, իր ծնընդավայրը:

Խեղճ Մուսուլին շրում խեղդելուց հետո, նա վազեց դեպի իր խուցը, շուտ-շուտ պարկի մեջ հավաքեց իր ունեցած-չու-

նեցածը, մի կապոց շինեց կապեց շալակը և հեռացավ: Ճանապարհը նա լավ եր դիտել զեռ այն ժամանակ, յերբ նրան Մոսկվա էյին բերում, գլուղը, վորտեղից նրան բերել եր տիրուհին, խըճուղուց մի քսանհինգ վերստաչափ հեռու յեր: Նա խճուղիով քայլում եր մի տեսակ անընկճելի անվեհերությամբ, հուսահատական, բայց միաժամանակ և՛ ուրախ վճռականությամբ: Նա գնում եր կուրծքը լայն բաց արած, աչքերն ազահաբար և շիտակ նայում էյին առաջ: Նա շտապում եր, կարծես իր ծննդավայրում նրան սպասում եր պառավ մայրը, կարծես ոտար յերկրում, ոտար մարդկանց մեջ, յերկարատև դեգերումից հետո, մայրն իր մոտ եր կանչում նրան... Խաղաղ և տաք եր հենց նոր սկսվող ամառային գիշերը:

Յերկնակամարի այն կողմը, վորտեղ արեն արդեն մայր եր մտել, բայց ամպերի յեզրերը զեռ սպիտակին էյին տալիս, մեղմորեն շառագունվում եր անհետացող որվա վերջին փայլից, մինչդեռ յերկնակամարի մյուս կողմում կուտակվում եր կապույտ, սևին տվող աղջամուղջը: Այստեղից եր գալիս գիշերը: Հարյուրավոր լորեր վրվտում էյին չորս կողմում, իրար էյին ձայնում մարգահավերը, կարծես նրանք մեկը մյուսի առաջ էյին ուզում կտրել... Գերասիմը չեւ կարող նրան լսել, չեւ կարող լսել նաև գիշերվա այն ծառերի սոսավունը, վորոնց մոտով անցնում եր նա իր հուժկու վտաններով, սակայն նա զգում եր հասունացող հաճարի ծանոթ բուրմունքը, վորով տուգորված էյին սևին տվող արտերը: Զգում եր, թե ինչպես առջևից փչող քամին, հայրենի քամին, քնքշությամբ խփում եր նրա յերեսին, խաղ եր անում նրա մազերի, նրա մորուքի հետ: Տեսնում եր յերկնքի անհամար աստղերը, վորոնք լուսավորում էյին նրա ուղին, և նա, վորպես առյուծ, քայլում եր ուժգին և առույգ ու, յերբ ծագող արեն իր թաց-կարմրագույն ճառագայթներով լուսավորեց նոր միայն ազատագրված գյուցադնին, նա յերեսունհինգ վերստ տարածությամբ բաժանված եր արդեն Մոսկվայից:

Յերկու որից հետո նա արդեն տանն եր, իր փոքրիկ խորճիթում, ի մեծ զարմանս մի զինվորի կնոջ, վորին բնակեցրել էյին այդտեղ: Սուրբ պատկերի առջև իր աղոթքն անելուց հետո, նա իսկույն գնաց ղեխի մոտ: Ռեսն սկզբում զարմացավ, բայց խոտհունձը զեռ նոր եր սկսվել: Իբրև լավագույն աշխատավորի հենց տեղն ու տեղը Գերասիմի ձեռքը տվին զե-

րանդին, նա գնաց հնձելու ըստ վաղեմի սովորութան, այնպես հնձելու, վոր գյուղացիների քեֆն եր գալիս՝ տեսնելով նրա բազուկների թափն ու հարվածի ուժը:

Իսկ Մոսկվայում, Գերասիմի փախստի մյուս որը, նոր միայն նկատեցին նրա բացակայությունը: Գնացին նրա խուցը, տալին ու վրա արին, ապա Գավրիլին հայտնեցին: Սա յեկավ, նայեց, ուսերը վեր քաշեց և վորոշեց, վոր համրը կամ փախել է, կամ իր հիմար շան հետ միասին խեղդվել է: Հայտնեցին վոստիկանությանը, զեկուցին տիրուհուն: Տիրուհին պայրացավ սկսեց լաց լինել, հրամայեց անպատճառ գտնել նրան, հավատացնում եր, թե ինքը յերբեք չի հրամայել, վոր շանը վոչնչացնեն և, վերջիվերջո, այնպիսի վախ գցեց Գավրիլի սիրտը, վոր սա ամբողջ որը գլուխը թափահարելով ասում եր՝ «Այ քեզ բան», մինչև՝ վոր քեռի Խվոստը նրան խելքի չբերեց ասելով՝ «Ղե, հերիք ե»:

Վերջապես լուր ստացվեց, թե Գերասիմը գտնվում է գյուղում: Տիրուհին մի քիչ հանգստացավ. սկզբում հրամայեց նրան անմիջապես հետ բերել Մոսկվա, բայց հետո հայտարարեց, թե նրա նման ապերախտ մարդու կարիքը չի գտում: Այս դեպքից հետո ինքն ել շուտով մեռավ, իսկ նրա ժառանգները Գերասիմով զբաղվելու ժամանակ չունեյին. սրանք իրենց մոր մնացած ծառաներին ել բահրով արձակեցին:

Յեւ մինչև որս ել Գերասիմը մեն-մենակ ապրում է իր խրճիթում. նա առաջվա պես առողջ է և կորովի. առաջվա պես աշխատում է չորս մարդու տեղ, և առաջվա պես ել վեհ ու լուրջ կերպարանք ունի:





ՀՀ Ազգային գրադարան



NL0329086

ԳԻՆԸ 55 ԿՈՊ.
Цена 55 Коп.

Ц 625-2

807

1
2

На армянском языке

И. С. Тургенев
М У М У

АЗОВО-ЧЕРНОМОРСКОЕ КРАЕВОЕ КНИГОИЗДАТЕЛЬСТВО

ԳՐԱԳՍ. ՀԵՍՏԸ

ՈՍՏՏՈՎ-ԴՈՆ ՍՈՍԿՈՎՍԿԱՅԱ ՓՈՂ. № 53

ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿԵՒԳՈՑԵՆՏՐ)